31-ՐԴ ՆԻՍՏ

4 նոյեմբերի 1918թ.

Նիստը բացվում է երեկոյան ժ. 7 ու կեսին, նախագահում է *Ա. Սահակյանը,* մինիստրական օթյակում են՝ Մինիստր-նախագահ և իրավարարության մինիստր: Օտար պետությունների օթյակումն է Վրաստանի դիվանագիտական միսիան ամբողջ կազմով. հյուրերի օթյակումն են Վրաստանի Հայոց Ազգային խորհրդի ներկայացուցիչներ, բարձրաստիճան զինվորականներ և Երևանի հիմնարկությանց բարձր պաշտոնյաներ. դահլիճը լիքն է մեծ հասարակությամբ:

Նախագահը կարդում է օրակարգը.

1. Կառավարության հայտարարությունն իր հրաժարականի մասին.
2. Պետական կոնտրոլյորի ընտրությունը.
3. Օրինագիծ Վրաստանի Հայոց ազգային խորհրդին միանվագ նպաստ բաց թողնելու մասին-վերջնական հաստատումը.
4. Օրինագիծ պետական հիմնարկությունների ծառայողներին միանվագ նպաստ տալու մասին-վերջնական հաստատումը.
5. Օրինագիծ քաղաքային կայքերի տուրքերի ավելացման մասին-վերջնական հաստատումը.
6. Օրինագիծ բժշկա-սանիտարական հանձնաժողովի առաջարկության մասին-վերջնական հաստատումը.
7. Օրինագիծ արդյունաբերական հիմնական և լրացուցիչ տուրքերի ավելացման մասին- Բ ընթերցում.
8. Հայաստանի խորհրդարանի նախահաշվի քննությունը- Ա ընթերցում.
9. Պառլամենտական հանձնաժողովի լրացումների խնդիրը.
10. Ընթացիկ գործեր:

Հ. Ազատյան - Ըստ կարգի խոսք է վերցնում և հայտնում, որ ինչպես տեղական թերթերը հայտնում են, տաճկական կառավարությունը որոշել է դեռ վեց շաբաթից հետո ազատել մեր երկիրը, մինչդեռ գաղթականությունը շատ ծանր վիճակի մեջ է, մի կողմից սովն է սպանում նրան, մյուս կողմից՝ վերահաս ցուրտը, ուստի սոց.-դեմ. ֆրակցիան առաջարկում է առաջին հերթին խոսել գաղթականական խնդրի մասին:

Ս. Խաչատրյան - Շատ ցանկալի ու կարևոր խնդիր է գաղթականական խնդիրը, սակայն բանը նրանումն է, որ տաճիկ զորքի հեռանալու մասին պաշտոնապես ոչինչ հայտնի չէ. մյուս կողմից էլ խնդիրը այդպես հանկարծակի հարուցված լինելով այս նիստին, նրա քննությունը նպատակահարմար չի կարող լինել: Խնդրի այժմեականությունը ընդունելով, մեր ֆրակցիան առաջարկում է թեկուզ հենց վաղը, հատուկ նիստ գումարել դրա համար, իսկ այսօր զբաղվել օրակարգի հարցերով:

Մին. նախագահ - Մի շաբաթ առաջ Մահմեդ Ալի փաշան նախ բերանացի, ապա գրավոր հայտնել է ինձ, որ տաճկ. բարձր հրամանատարությունից հրաման ունի ստացած հայտնելու, որ տաճիկ զորքը 6 շաբաթվա ընթացքում պիտի

դատարկե հայկական տերիտորիան, սկսած հոկ. 24-ից: Վեց շաբաթ ժամանակամիջոցը երկար նկատելով և գաղթականության վիճակը նկարագրելով, խնդրեցի շտապեցնել դատարկումը. փաշան հայտնեց, որ իրենից ոչինչ չի կախված, միայն թե ինքը կհայտնի այդ մասին տաճկ. հրամանատարության: Դատարկումը աստիճանաբար է լինելու, թե՞ միանգամից, փաշան հայտնեց, որ այդ էլ իրեն հայտնի չէ և խոստացավ այդ մասին էլ դիմում անել Կարսի վրայով իր կառավարությանը: Այդ մասին գրել եմ և Վրաստանի մեր ներկայացուցչին, որ նա էլ որոշ քայլեր անի այդ ուղղությամբ: Ուրիշ մանրամասնություններ չեմ կարող հայտնել:

Ս. Մամիկոնյան - Մինչև որ Մահմեդ Ալի փաշայի գրությունը այստեղ չկարդացվի, որոշակի ոչինչ ասել հանավոր չէ:

Մին. նախագահ - Թուղթն այստեղ չէ, միայն նրա մեջ կա այն, ինչ որ հայտարարեցի, ավելի ոչինչ չունի նա իր մեջ:

Ս. Խաչատրյան - Դաշն. ֆրակցիայի կողմից առաջարկում եմ գաղթակ. վերադարձի խնդիրը թողնել վաղվան, որովհետև որոշ տվյալներ առձեռն չկան:

Քվեարկության է դրվում երկու առաջարկ, մեկ՝ թողնել վաղվան, մյուսը՝ քննել հենց այսօր. անցնում է ա. առաջարկը:

Այնուհետև կարդացվում է խորհրդարանի հրաժարված պատգամավորների և սրանց փոխարինող նոր անդամների անունները:

Նախագահ - Կարդում է կառավարության ամբողջ կազմի հրաժարականը, ստացված նոյեմբերի 4-ին: Հրաժարականը պատճառաբանվում է նրանով, որ խորհրդարանի մեծամասնության և կառավարության մեջ այնպիսի փոխհարաբերություն է ստեղծված, որ այլևս արդյունավետ աշխատանք չի կարող կատարել կառավարությունը:

Ս. Թորոսյան - Դաշն. ֆրակցիայի կողմից առաջարկում եմ ընդունել կառավարության հրաժարականը և հանձնարարել Քաջազնունուն՝ նորից կաբինետ կազմել:

Հ. Ազատյան - Խորհրդարանը դեռ մշակված ձև չունի Մինիստր-նախագահի ընտրության վերաբերյալ, ուստի և հնարավոր չէ ընդունել դաշն. ֆրակցիայի առաջարկը:

Ս. Մամիկոնյան - Հրաժարականի միտքը այն է դուրս գալիս, որ կաբինետը չի կարողացել կառավարել երկիրը, այդ պատճառով էլ հրաժարվել է, հետևապես չի կարելի նորից հանձնել Քաջազնունուն կաբինետ կազմելը: Առաջարկում եմ հանձնարարել խորհրդարանի նախագահին, որ նա խորհրդակցելով խորհրդարանի հետ, հանձնե մի նոր մարդու կաբինետի կազմումը. պիտի փորձել՝ նոր մարդու տալ: Ընդհանուր կոալիցիան կարող է մեր երկիրը փրկել, ուստի անհրաժեշտ է, որ բոլոր ուժերը գործակցեն: Էսդեկների ֆրակցիան մի տեսակ միջնորդ է մեր և հարևան Վրաստանի, իսկ էսէռները ներկայանում են որպես ներկայացուցիչ ռուսական մեծ հոսանքի:

Հ. Ազատյան - Պառլամենտական երկրներում այնպիսի կարգ չկա, որ հրաժարված մինիստրին հանձնվի նոր կաբինետ կազմել: Հին կաբինետը չի կարողացել գործել, օգտակար աշխատանք կատարել, ուրեմն և նրա մի անդամին չի կարելի հանձնել կաբինետի կազմումը: Խորհրդարանի որոշմամբ դեմոկրատիկ ֆրակցիաները մշակեցին մի ընդհանուր պլատֆորմ. պիտի խորհրդարանի բոլոր ուժերի գործակցությունը լինի, որը և կփրկե երկիրը կորստից: Պիտի հանձնել կաբինետի կազմումը նոր մարդու, որ օրինականություն ճանաչե:

Առաջարկում է կարճել վիճաբանությունները, որը և ընդունվում է:

Նախագահ - Համաձայն նակազի, վիճաբանությունները պիտի շարունակվեն:

Ա. Խոնդկարյան - Բացատրում է, թե ինչ է եղել պատճառը կառավարության հրաժարման և զարմանում է, որ ամբողջ կազմը հրաժարվելուց հետո խոսք է լինում հանձնել նորից Քաջազնունուն կաբինետ կազմել: Դա հակասում է պառլամենտական կարգերին և էսէռական ֆրակցիայի կողմից բոլորովին անընդունելի է:

Ս. Թորոսյան - Այստեղ խոսում են ինչ որ ապօրինության մասին; Ասացեք, դուք օրինական պատգամավորներ ե՞ք՝ այստեղ եկողներդ. ո՞ր ժողովուրդն է ձեզ

ընտրել: Մեզ մեղադրում են ծախից, թե մենք ձեզ չենք ցանկացել իրենց հետ կազմել կոալիցիա. ճիշտ չեն ասում, նրանք իրենք չեն ցանկացել լծվել դժվարին գործին: Մենք ժողովրդական շահն աչքի առաջ ունենալով ձեզ հրավեր, առաջարկություն ենք անում, դուք թվերի մեջ եք մտնում: Պ. Մամիկոնյանը չէ, որ մեզ պիտի սովորեցնի «Հող և ազատություն» շարժման մասին: Ապօրինի ոչինչ չկա, երբ հրաժարված մինիստրին մենք առաջարկում ենք հանձնել կաբինետ կազմելը, այդպիսի դեպքեր եղել են Ֆրանսիայում: Այստեղ գործի պիտի անցնեն այնպիսի մարդիկ, պիտի կազմել այնպիսի մարմին, որ կապ չունենան ուրիշ երկրների կոմիտեների հետ:

Արշ. Մելիքյան - Որոշ ֆրակցիաներ զուր են բողոքում այն բանի դեմ, որ Քաջազնունուն հանձնվի նախագահությունը: Այդ հարցը կուլիսներում լուծված վերջացած է, և այդ գործին մասնակից են եղել հենց նույն ֆրակցիաները, որոնք այսօր բողոքում են. բողոքում են միայն այն պատճառով, որ իրենց համար ցանկալի արդյունքը չի ստացվել և ոչ թե ընդհանուր երևույթի դեմ են բողոքում: Սխալ է, երբ նույն ֆրակցիաները պնդում են, թե չի կարելի հրաժարված մինիստրին հանձնել կաբինետի կազմումը: Պառլամենտական երկրներում այդ տեղի է ունենում (բերում է օրինակներ և փաստեր): Առաջարկում եմ նախ այստեղ մշակել այն պլատֆորմը, ըստ որի պիտի գործի նոր կոալիցիոն կառավարությունը և նոր ապա հանձնել սրան կամ նրան կաբինետ կազմելը: Համոզված լինելով, որ արդեն ամեն բան վճռված վերջացած է, առաջարկում եմ հայտարարել ու վերջ տալ ավելորդ վիճաբանություններին:

Տ. Մուշեղյան - Ամեն անգամ պատգ. Մելիքյանը բարձրանալով ամբիոն՝ քննադատում է աջ և ձախ ֆրակցիաները, պառլամենտարիզմից քարոզներ կարդում, չգիտենք ինչու՞մն է կայանում նրա դերը և ինչու՞ է մնում խորհրդարանում: Քաջազնունու քաղաքականությունը ճկուն չի եղել, որի պատճառով էլ օգտակար չի եղել այն մեր երկրի համար. ուստի և նրան չի կարելի հանձնել կաբինետի կազմումը, ինչպես պնդում են Թորոսյանն ու մանավանդ Մելիքյանը: Դաշնակցականները միայն ուժ գործ դնել գիտեն, իսկ երբ նրանք պիտի հանձնաժողովներում աշխատանք կատարեն, այդ մենք չենք տեսնում. մենք նրանց միշտ զոռով ենք աշխատանքի կանգնեցրել: Նրանք միշտ հեռու են պահել հայ դեմոկրատիան ընդհանուր դեմոկրատիայից, հիմա էլ նույնը ուզում են շարունակել:

Ս. Թորոսյան - Եթե Մուշեղյանն իմ խոսքը հասկացել է այն մտքով, որ կապ չպիտի ունենա մեր դեմոկրատիան Ռուսաստանի դեմոկրատիայի հետ, այդ դեպքում նա չարաչար սխալվում է: Մենք չենք ցանկանում, որ մեր պատգամավորները անտեղի դիրեկտիվներով առաջնորդվեն: Ինչ վերաբերում է այն բանին, որ մենք միայն խոսում ենք և գործից խուսափում ենք, ինչպես օր. շեշտեցին հանձնաժողովների նիստերի մասին, ես կասեմ՝ թերթեցեք այդ նիստերի արձանագրությունները: Դուք ուզում եք այստեղ մի ինչ որ բան բացեք, բայց չեք անում, ես բաց կանեմ վարագույրն ամբողջությամբ: Հ. Հ. Դաշնակցությունն իր դիրքով ինքը պիտի կազմեր կոալիցիան: Նա շատ անգամ դիմեց ձեզ՝ ձախերիդ, և դուք՝ էսէռներ, մեզ պատասխանեցիք, որ դուք չեք տա արտաքին գործերի մինիստրությունը էսդեկներին. հետո էլ ասել եք, որ համաձայն եք: Էսդեկների ֆրակցիայի գործը մեզ հայտնի չէ, մենք մինչև այժմ չգիտենք, թե ու՞մ կարգադրությամբ են այստեղ գալիս: Ընդհանուր դեմոկրատիայի մասին մենք միտինգներում կխոսենք, իսկ այժմ հրապարակի վրա դրված է կառավարություն կազմելու հարցը: Երբ Հայաստանի ժողովուրդը քառանդամ սիստեմով ընտրություն կանի և իր վստահությունը կտա սրան կամ նրան, այդտեղ գուցե և դուք կլինեք գերիշխողը, սակայն մինչև այդ կյանքի ղեկը մեր ձեռքին պիտի լինի. երեսուն տարի մեր կուսակցությունն է եղել, որ գործ է կատարել և հազարներով զոհեր է տվել:

Եր. Հարությունյան - Առարկելով Ազատյանին, օրինակներ է բերում Ամերիկայից և Անգլիայից ապացուցելու համար, որ հրաժարված մինիստրը կարող է նորից կաբինետ կազմել: Մենք կողմնակից ենք ընդհանուր կոալիցիայի, ստիպված եղանք համաձայնել մասնակիի հետ, և այդ կոալիցիան դրական աշխատանք կկատարե: Մի՞թե միայն ձախերի շնորհիվ կյանքը կարող է կառավարվել. չէ՞ որ նրանց կառավարությունն էլ տեսանք Ռուսաստանում: Առաջարկում ենք համաձայնել դաշն. ֆրակցիայի առաջարկին և հանձնել Քաջազնունուն կաբինետ կազմելը:

Ս. Մամիկոնյան - Բողոքում է Թորոսյանի հայտարարության դեմ և շեշտում, որ ինքը Ռուսաստանի ազատագրական շարժման մասնակցել է, լրագրողհրապարակախոս է և ոչ վարժապետ, որ սրան կամ նրան բան սովորեցնի. պահանջում է, որ Թորոսյանը հետ վերցնի իր խոսքերը, նորից կոչ է անում համագործակցության:

Դ. Զուբյան - Առարկում է Թորոսյանին և Եր. Հարությունյանին և բացատրում, որ դաշնակցականները իրեն տվել են միայն երկրորդական պոստեր, մինչդեռ իրենց պահանջը գլխավոր պոստերին է վերաբերվել, այնպես որ դաշնակցությունը զիջում չեն արել, որի հետևանքով էլ գիծը չի փոխվի, այդ պատճառով էլ իրենք չեն մասնակցել:

Հ. Ազատյան - Քննադատում է դաշնակցության, առանձնապես Քաջազնունու քաղաքականությունը, համարելով այն կործանիչ հայ ժողովրդի համար: Թուրքաֆիլությունն այժմ ձեռնտու չէ մեզ, անհրաժեշտ է փոխել մեր արտաքին քաղաքականությունը: Պիտի փոխվի և ներքին քաղաքականությունը, քանի որ երկիրը ներքնապես ևս տապալվում է: Մեր կառավարությունը վարկ չունի, ինչպես օրինակ Ադրբեջանը չի ընդունել մեր դիվանագիտական ներկայացուցչին: Ահա այդ նկատառումներով էր, որ մենք՝ ձախակողմյաններս, պահանջում էինք հիշյալ պորտֆելներից մեկն ու մեկը: Նորից առաջարկում ենք նախագահությանն ու ավագների խորհրդին՝ հանձնել մի նոր մարդու կաբինետ կազմելը:

Ս. Խաչատրյան - Ազատյանը, որ նիստի սկզբում գաղթականության հարցն էր ուզում Ա. հերթին քննել, այնքան մոռացավ իրեն և դաշնակցության մասին խոսելիս այնքան հեռու գնաց ու այնքան ոգևորվեց, որ բառերի ու ֆրազների տարափի տակ քիչ մնաց մեզ խեղդեր: Խոսքը, խոսելը դարձրել եք նպատակ և միշտ հեռու եք պահում ձեզ գործից ու գործնական աշխատանքից: Կառավարություն չունենք, պիտի շատ շուտով՝ հենց վաղը կազմել կաբինետ, այսօր լուծելով վերջինիս հետ կապված բոլոր խնդիրները:

Այնուհետև առաջարկվում են բանաձևեր դաշնակցական և սոց.-դեմոկրատ ֆրակցիաների կողմից: Դաշնակց. բանաձևի Ա. մասը՝ ընդունել կառավարության հրաժարականը-ընդունվում է բոլոր ֆրակցիաների կողմից. իսկ Բ. մասը՝ հանձնարարել Քաջազնունուն նոր կաբինետ կազմել, անցնում է 25 ձայնով ընդդեմ 14-ի և մեկի ձեռնպահությամբ:

Օրակարգի Բ կետը պետական կոնտրոլորի ընտրության խնդիրն է: Ժողովրդական կուսակցությունը առաջարկում է Մինաս Բերբերյանի թեկնածությունը:

Հ. Ազատյան - Այստեղ կազմված սև կամ դեղին բլոկը պիտի թույլ տար, որ կոնտրոլորը լիներ մի ուրիշ կուսակցության թեկնածու. մեր ֆրակցիան դեմ պիտի քվեարկի:

Մ. Հարությունյան - Նկատի ունենալով, որ պ. Բերբերյանը որոշ պատրաստություն ու մասնագիտություն ունի տվյալ պաշտոնի համար և ամենագլխավորը՝ որ նա կատարյալապես վստահելի է ու շիտակ իբրև մարդ, այդ պատճառով էլ դաշնակցական ֆրակցիան քվեարկելու է հօգուտ նրա: Քվեարկվում է. պ. Բերբերյանի թեկնածությունն անցնում է 26 ձայնով, ընդդեմ 11-ի և 2-ի ձեռնպահությամբ:

Կարդացվում են օրակարգի մյուս կետերը՝ Գ. Դ. Ե. Զ. և վերջնականապես հաստատվում. է. կետը հետաձգվեց վաղվան:

Մինիստր-նախագահ Քաջազնունին հայտարարում է նոր կաբինետի կազմը.

Մինիստր-նախագահ - Քաջազնունի,
Արտաքին գործոց - Ս. Տիգրանյան,
Ներքին գործոց - Ա. Մանուկյան,
Խնամատարության - Խ. Կարճիկյան,
Իրավարարության - Մ. Հարությունյան,

Լուսավորության - Մ. Աթաբեկյան,
Պարենավորման - Լ. Դուլյան,
Ֆինանսների - Ա. Էնֆիաջյան:

Մինիստր-նախագահը անում է հայտարարություն և այն մասին, որ այսօր Օսմանյան հեռագրական գործակալությունը պաշտոնապես հայտնել է, որ տաճիկների և դաշնակիցների բանակցությունները վերջացած են, կնքված է զինադադար. Պոլսում տաճկական դրոշակների կողքին ծածանվում են դաշնակից պետությունների դրոշակները: Սպասվում են Ամերիկայից մեծ քանակությամբ ապրանքներ Դարդանելով, այդ ապրանքներից մենք ևս հավանորեն բաժին կունենանք. սպասվում է մեծ քանակությամբ հացահատիկ:

Խորհրդարանը և հասարակությունը օվացիա սարքեցին որբախնամ և գաղթականախնամ Ամերիկյան ընկերության ներկայացուցչին, որ ներկա էր նիստին:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 11-ին:

«Զանգ», 10 և 14 նոյեմբերի 1918թ.: